



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«17» 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 059 - 24

Ձեռնարկողը՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

ք. Երևան, Չարենցի փ. 1

Գործունեությունը՝

«Կոպայք 2» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված
փարաձական պլանավորման փաստաթղթի շրջակա
միջավայրի վրա ազդեցության ռազմավարական
գնահատման հաշվետվություն

Կոպայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 9 թերթ

արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

Մարզի վարչական կենտրոնը՝ Հրազդան քաղաքը, գտնվում է Երևանից 40 կմ հեռավորության վրա՝ հյուսիս-արևելք, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1750 մ է: Հրազդան քաղաքը զբաղեցնում է 152 կմ² տարածքը:

Մարզն իր մեջ ընդգրկում է Աբովյանի, Նաիրիի (Եղվարդի) և Հրազդանի միկրոռեգիոնները:

Կոտայքի մարզն ընդգրկում է Կոտայքի սարավանդը, Մարմարիկ գետի ավազանը, Հրազդան գետի ավազանի վերին ու միջին հատվածը, ինչպես նաև Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջերը, ունի բլրապատ ռելիեֆ: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ և Ազատ գետերը: Հրազդան գետը (նախկին անվանումը՝ Ջանգու) Արաքս գետի ձախ վտակներից է, որոնց ջրերն օգտագործվում են ոռոգման և արդյունաբերական ձեռնարկություններին ջրամատակարարման նպատակներով: Մարմարիկի հովտում է գտնվում «Հանքավան» ջրի հանքավայրը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է, բարձրությունը՝ 2 528 մ:

Մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնց մեջ հիշարժան է Գառնու հեթանոսական տաճարը՝ մինչ օրս պահպանված նախաքրիստոնեական հայկական արվեստի եզակի նմուշ: Նշանավոր են նաև Բջնի բերդը, միջնադարյան Կեչառիսի վանքային համալիրը և Գեղարդավանքը:

Մարզի ընդհանուր անտառային ֆոնդը կազմում է 22907.5 հա կամ մարզի տարածքի 11.0%-ը: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների (այդ թվում՝ արգելավայրեր, բնության հուշարձաններ) 2.6%-ը (8694.3 հա) գտնվում է Կոտայքի մարզում, որը կազմում է մարզի տարածքի շուրջ 4.2%-ը: «Կոտայք-2» ՄՄՏՏՊՓ տարածքում առկա է պատմության և մշակույթի անշարժ 3208 հուշարձան:

Մարզի արդյունաբերության առաջատար ճյուղերն են սննդի, կաթի և կաթնամթերքի, պահածոների, ոգելիչ և ոչ ոգելիչ խմիչքների արտադրատեսակների արտադրությունը: Մարզը հարուստ է մետաղի և այլ օգտակար հանածոներով: Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 25 հանքավայրում:

Մարզը հարուստ է նաև հանքային ջրերի ելքերով, դրա վկայությունն են «Բջնի», «Հանքավան» և «Արզնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան-Հրազդան-Սևան՝ Մ-4 միջպետական նշանակության ավտոմայրուղին և Երևան-Հրազդան-Իջևան երկաթգիծը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով:

Կոտայքի մարզն աչքի է ընկնում չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով: Կլիման ըստ բարձրության փոխվում է տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10 °C-ից մինչև 2.5 °C, հունվարինը ցածրագույնը:



վայրերում՝ 4.5–5 °C, բարձրադիր մասերում՝ – 3.6 °C, հուլիսինը՝ համապատասխանաբար 22.2 °C և 8.7 °C: Այստեղ դիտարկվում են տարեկան 488 մմ՝ 30-40 մմ տատանումներով մթնոլորտային տեղումներ:

Երկրաբանական տեսակետից տարածքում զարգացած են չորրորդական (Q1-Q4) դելյուվիալ-պրոլյուվիալ, էյուվիալ գոյացումները՝ ներկայացված կավավազային և խոշորաբեկորային գրունտներով, որոնք ծածկում են հրաբխային ապարները՝ ներկայացված պլիոցենյան հասակի անդեզիտա-բազալտներով, դոլերիտային բազալտներով և խարամներով:

«Կոտայք-2» միկրոռեգիոնը գտնվում է սեյսմիկ 2 գոտում /8-9 բալ/, բոլոր բնակավայրերին բնորոշ են բնածին վտանգավոր երևույթներ ինչպիսիք են՝ ուժեղ քամիները և կարկուտները, քարաթափումները, հեղեղներն ու սելավները, ինչպես նաև երկրաշարժը:

«Կոտայք 2» միկրոռեգիոնը իր մեջ ներառում է Աբովյան խոշորացված համայնքի Աբովյան քաղաքը, Առինջ, Արամուս, Բալախովիտ, Գեղաշեն, Գետարգել, Կաթնաղբյուր, Կամարիս, Մայակովսկի, Պտղնի, Վերին Պտղնի գյուղերը, ինչպես նաև Արզնի համայնքը, որտեղ բնակչության թիվը կազմում է է 74.947 հազ. մարդ, հեռանկարում կկազմի ~78.500 հազար մարդ:

Միկրոռեգիոնը պատկանում է լեռնատափաստանային և լեռնամարգագետնային շրջանին, բարձրությունը ծովի մակարդակից 1200-1600 մետր է, Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ:

Միկրոռեգիոնի կենսաբազմազանությունը ձևավորվում է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

«Կոտայք 2» միկրոռեգիոնը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա-տարազգի ներկայացուցիչները:

Բուսական աշխարհը ներկայացված է անդեզիտա-բազալտային և տուֆա-լավային մայր ապարների վրա տարածված տարալվացված տիպիկ և սովորական սևահողերով՝ տափաստանային մոտ 150 բուսատեսակ բուսականությամբ:

Այստեղ գրանցված են պահպանության կարիք ունեցող Կարմիր գրքում ընդգրկված ֆլորայի 14 տոկոսը:

Միկրոռեգիոնում հանդիպում են կենդանիներ, որոնց կարգաբանական խմբերից շատ տեսակներ ընդգրկված են Կարմիր գրքում՝ Բեզոարյան այծ, Հարավոսական խայտաքիս, Անդրկովկասյան սահնաօձ, Ոսկեգույն մաքուս, Կովկասյան կատվաօձ և այլն: Այստեղ գրանցված են պահպանության կարիք ունեցող Կարմիր գրքում ընդգրկված ֆաունայի 10 տեսակ: Բնության հատուկ պահպանվող տարածքների շնորհիվ ապահովվում են եզակի էկոհամակարգերի, հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող, էնդեմիկ, ռելիկտային տեսակների պահպանությունը և վերարտադրությունը բնական միջավայրում:

«Կոտայք 2» միկրոռեգիոնի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը փաստացի 19190,55 հա այդ թվում՝

- բնակավայրերի հողեր փաստացի՝ 3525.92հա, հեռանկարում՝ 3864.812 հա,



- արդյունաբերական ընդերքօգտագործման հողեր փաստացի՝ 859.28հա, հեռանկարում՝ 903.076 հա,
- էներգետիկայի և տրանսպորտի հողեր փաստացի՝ 198.42 հա, հեռանկարային՝ 202.463 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր փաստացի՝ 280.58 հա, հեռանկարում՝ 279.560 հա
- հատուկ նշանակության հողեր՝ փաստացի 311.25հա, հեռանկարում՝ 309.380 հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ փաստացի 13672.88 հա, հեռանկարում՝ 13289.199 հա,
- անտառային հողեր՝ փաստացի 254.77 հա, հեռանկարում չի փոխվում,
- ջրային հողեր՝ փաստացի 87.45 հա, հեռանկարում՝ 87.290 հա,
- պահուստային – բացակայում են:

« Կառավարության 2007 թ. 9 օգոստոսի N 1036-Ն որոշմամբ հաստատված Աբովյան համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագիծի համաձայն՝ «Կոտայք 2» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում Աբովյան համայնքի հեռանկարային զարգացման համար նախատեսված է 84.863 հա ընդհանուր օգտագործման տարածք(գլխավոր հատակագծի գծագրային մասը ներառված է հաշվետվության մեջ):

«Կոտայք 2» միկրոռեգիոնի նախագծում արտացոլված են բնական պաշարների (ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության, տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների և կաթսայատների ճիշտ տեղադրման արդյունքները՝ անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ՝ կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներա-տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ հիմնախնդիրներ, որոնք մանրամասն նկարագրված են նշված բնակավայրերի զարգացման ծրագրերում:

Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ գյուղմթերքի արտադրությունը, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի հողագործությունը և առևտուրը:

«Կոտայք 2» միկրոռեգիոնի համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնաժին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:



Համաձայն հաշվետվության՝ համայնքների հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր, աղտոտվածության դասը՝ թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար:

«Կոտայք-2» միկրոռեգիոնում բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է բնական աղբյուրներից: Զուրն աղբյուրներից առանձին ջրագծերով հասնում է բնակավայրեր և բաժանվում սպառողներին:

Ըստ «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկատվության՝ Աբովյան քաղաքի, Արնջ, Արամուս, Բալահովիտ, Գեղաշեն, Գետարգել, Կաթնաղբյուր, Կամարիս, Մայակովսկի, Պտղնի, Վերին Պտղնի բնակավայրերի և Արզնի Զրամատակարարման համակարգերի գլխամասային կառույցների սանիտարահիենիկ տեխնիկական վիճակը տարբեր է: Սանիտարական պահպանման գոտիների տարածքներում տարածքի ցանկապատումը, լուսավորումը անմխիթար վիճակում է, բացակայում է պահակային ծառայությունը: Բոլոր բնակավայրերի ջրամատակարարման համակարգի կառույցներն ունեն սարքավորումների և տարածքների պահպանության սանիտարական նորմերի ապահովման կարիք:

Բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակը որոշելու համար որպես ելակետային տվյալ ընդունվել է 200 լ/օր/մարդ: Սույն նորմն ընդգրկում է գյուղական բնակչության խմելու-կենցաղային ջրապահանջը (150 լ/օր /ըստ ՇՆևԿ 2.04.02.84/:

«Կոտայք-2» միկրոռեգիոնում միկրոռեգիոնի բնակավայրերը որոշ չափով կոյուղացված են, սակավաթիվ հասարակական շենքերի կեղտաջրերը ուղղվում են ջրահեռացման համակարգեր:

Հաշվի առնելով ոռոգման ցանցերի անբավարար վիճակը, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև արդյունավետ ոռոգումն ապահովելու նպատակով նպատակահարմար է ոռոգման ներքին ցանցի վերականգնումը, ինչը զգալիորեն խթանում է գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացմանը:

«Կոտայք 2» միկրոռեգիոնի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում հոսքաջրերը ներծծվում են հողի մեջ կամ անկանոն առուների միջոցով հեռանում: Նման երևույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքերի համար նախատեսված է հեղեղատար ցանցի կառուցում:

«Կոտայք-2» միկրոռեգիոնի էլեկտրամատակարարումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի կողմից: Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով: Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար: Գլխավոր փողոցներում անցկացվել է արտաքին լուսավորություն:

Ըստ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ դիտարկվող միկրոռեգիոնի ոչ բոլոր բնակավայրերն են գազաֆիկացված: Բնակավայրերի տարածքում գազամատակարարումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ միջին և ցածր: «Կոտայք-2» միկրոռեգիոնի Բյուրակն, Հովտուն, Արեգնաղեմ, Զրածոր, Գտաշեն և Կամխուտ գյուղերը գազաֆիկացված չեն:

Միկրոռեգիոնի բնակավայրերի վարչական, հասարակական, ուսումնական, առողջապահական և արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական շենքերի



ջերմամատակարարումն իրականացվում է մեծամասամբ գազի վառարանների միջոցով: Որոշ դեպքերում օգտագործվում է նաև այլ վառելանյութեր, գյուղական բնակավայրերի բնակչության որոշ մասը ջեռուցման նպատակով օգտագործում է փայտի կամ աթարի վառարաններ:

Ըստ ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ դիտարկվող միկրոռեգիոնի տարածքում բջջային կապն ապահովում են «ՅՈՒՔՈՄ» ՓԲ, «ՄՏՍ Հայաստան» և «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությունները:

Միկրոռեգիոնի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են, աղմուկը առաջանում է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

«Կոտայք 2» միկրոռեգիոնի բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 4130.38 հա, հեռանկարում՝ 4443.62 հա ՍՊԳ-ի չափերին համապատասխան, գործող 1 հատ աղբավայրը գտնվում է Աբովյան քաղաքից 6 կմ հեռավորության վրա՝ Կաթնաղբյուր բնակավայրի վարչական տարածքում և զբաղեցնում է 6 հա տարածք: Աղբավայրը ցանկապատված չէ, առկա են այրման բազմաթիվ օջախներ և նախկինում տեղի ունեցած այրման հետքեր: Հաճախակի են աղբի կուտակումները հենց բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է բնակավայրերի սանիտարական վիճակի վատացմանը: Միկրոռեգիոնում աղբահանությունը կազմում է 8164 տոննա/տ, այդ թվում բնակչությունից՝ 8085,5: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր»-ի շրջանակներում կառուցվում և շահագործվում է եվրամիութենական ստանդարտներին համապատասխան սանիտարական աղբավայր՝ աղբահանության արդյունավետ համակարգ:

Միկրոռեգիոնի տարածքում առկա են ընդհանուր 71.96 հա մակերեսով 30 գերեզմանոց: Այն հատվածներում որտեղ սանիտարական պահպանման գոտիները բացակայում են նախատեսվում են ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատման միջոցով: Նախատեսվում է 7.88 հա ընդհանուր մակերեսով նոր 2 գերեզմանոց՝ Արամուս և Բալահովիտ բնակավայրերում՝ ՍՊԳ-ի չափերին համապատասխան:

Գյուղական բնակավայրերում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) բացակայում են:

«Կոտայք 2» միկրոռեգիոնի համար կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ միկրոռեգիոնի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,
- բնակավայրերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,



- ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարեկարգում,
- արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- Համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում,
- համայնքների տարածքում աղբահանման կազմակերպում
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- հողի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում /էրոզացումից, դեգրադացիայից և այլնից պաշտպանելու նպատակով/ անտառատնկումների միջոցով,
- ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի նախատեսում, աղբամշակման գործարանի կառուցում,
- ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում,
- ասֆալտապատման, ճանապարհաշինության աշխատանքներ,
- խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,
- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ:

Ներկայումս բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով:

Հիմնականում արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով բնակավայրերում զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից:

«Կոտայք 2» ՄՄՀՏՊՓ նախագծի գործունեության ընթացքում առաջարկվում է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն, ինչը թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ և արդի հեռանկարային ուղղությունները, ներդրումների համար ուշագրավ ոլորտները, ինչպես նաև միկրոռեգիոնի բնապահպանական խնդիրների ներգրավման և դրանց հնարավոր լուծումներին ուղղված համապատասխան միջոցառումները:

Հիմնադրույթային փաստաթղթի նախագծով նախատեսվում է նաև ջրային ռեսուրսների ու թափոնների կառավարման ոլորտների և խախտված հողերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրերի կազմում և իրականացում:

Ընդհանուր առմամբ «Կոտայք 2» ՄՄՀՏՊՓ նախագծի համայնքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:



Պատճառաբանական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է միկրոռեգիոնի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես միկրոռեգիոնային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Փորձաքննության բոլոր փուլերում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել հիմնադրությամբ փաստաթղթի վերաբերյալ:

«Կոտայք 2» ՄՄՀՏՊՓ նախագծում ընդգրկված համայնքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

- Միկրոռեգիոնում քաղաքաշինական հեռանկարային լուծումներն իրականացնելիս՝ բացառել հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանական գոտիների և օգտագործման ռեժիմի խախտումը, անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները, պահպանել սահմանված կարգով հաստատված, բնակավայրերի գլխավոր հատակագծերում



